* * *

Առաջին արձանագրութիւնը վերաբերում է Ն. Ժորտանիայի եւ անգլիական երկաթուղային առաքելութեան պետ զօր. Բրոուդի խօսակցութեան 1919 թ. փետր. 6-ին: Բրոուդը եկել էր Կովկաս կարգաւորելու համար երկաթուղային գործը եւ պահանջ էր դրել, որ վրաց երկաթուղիները ենթարկուին անգլիական վերահսկողութեան: Վրաց կառավարութեան շատ էլ հաճելի չէր նման դրութիւնը, բայց նա չէր կարողանում մերժել եւ զանազան միջոցներով ձգձգում էր: Դրա համար նա հարցը ուղարկել էր երկաթուղային խորհրդին ի քննութիւն, իսկ այս վերջինս, իր հերթին, նոյնպէս ձգձգում էր: Զօր. Բրոուդը պնդում է, որ օր առաջ այս հարցը լուծուի դրական մտքով:

Այնուհետեւ զօր. Բրոուդը յարուցանում է Վրաստանի, Ադրբէջանի եւ Հայաստանի ներկայացուցիչներից ընդհանուր երկաթուղային յանձնախումբ կազմելու խնդիրը: Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնների համաձայնութիւնը ունի. մնում է վրաց կառավարութեան համաձայնութիւնը:

Ժորտանիան նման յանձնախմբի կազմութիւնը գտնում է օգտակար, բայց պայման է դնում, որ Բաթում-Նոթանիբի երկաթուղագիծը, որ գտնւում էր անգլիացիների ձեռքը, միացուի Վրաստանի երկաթուղիներին: Բրոուդը պատասխանում է, որ անգլիական հրամանատարութիւնը դէմ չէ այդպիսի միացման, բայց նախնական պայման է դնում, որ առաջ ստեղծուի միջպետական յանձնախումբ: Ժորտանիան, իր հերթին, պատասխանում է, որ միջպետական յանձնախումբը կը կազմուի, հէնց որ Բաթում-Նոթանիբի գիծը միացուի Վրաստանի երկաթուղագծին: Եւ աւելացնում է, որ միջպետական յանձնախումբը վաղուց արդէն կազմուած կը լինէր, եթէ չխանգարէր պատերազմը Վրաստանի եւ Հայաստանի միջեւ: Ժորդանիան ասում է, որ Անգլիայում եղած ժամանակ ինքը միշտ հիացել է անգլիական երկաթուղիների խելացի կազմակերպութեամբ եւ խնդրում է, որ Բրոուդը գրաւոր կերպով հաղորդէ բոլոր այն միջոցների մասին, որոնք, իր կարծիքով, պէտք է գործադրուին վրաց երկաթուղիները բարեկարգելու համար: Զօր. Բրոուդը յայտնում է իր խորին համոզումը, որ վրաց հանրապետութեան ունեցած կարգ ու սարքով եւ առատ շոգեմեքենաներով ու վագոններով կարելի է հրաշալի կերպով կազմակերպել երկաթուղային գործը եւ խոստանում է ցոյց տալ խնդրուած աջակցութիւնը:

Այս խօսակցութիւնը հետաքրքրական է երկու կողմով. նախ՝ նրանով, որ անգլիացիք աշխատում են ձեռք դնել վրաց երկաթուղիների վրայ. երկրորդ՝ այն վերին աստիճանի հաճոյակատար վերաբերումով, որ վրաց կառավարութեան ընկերվարական նախագահը ցոյց է տալիս դէպի իմպերիալիստական պետութեան մի զօրավարը: Այդ հաճոյակատարութիւնն յետագային երեւան կը դայ աւելի պերճ ձեւերով:

Երկրորդ խօսակցութիւնը Ժորտանիան ունենում է զօր. Ֆորեստիէր Ուօկկերի հետ, 1919 թ. փետր. 15-ին: Խօսակցութեան ներկայ են լինում եւ արտաքին գործոց նախարար Ե. Գեգեչկորին, ֆրանսական զինուորական առաքելութեան պետ Շարդինին, զօր. Բիչը, երկու կողմերի թարգմաններն ու վրացի քարտուղարը: Խօսակցութեան նիւթն են Վրաստանին վերաբերուող մի շարք քաղաքական հարցեր: Պէտք է յիշել, որ այդ օրերին Վրաստանը գտնւում էր շատ ծանր վիճակի մէջ: Աջարիայում եւ Ախալցխայի շրջանում ծայր էր տուել հակավրացական մահմեդական շարժում. հիւսիսից՝ Սոչիի կողմից յարձակուել էին ռուս կամաւորականները: Սկսուել էին եւ ներքին հակապետական շարժումներ: Վրաստանը բաւական նեղ վիճակի մէջ էր. մի շարք ծանր հարուածներ էր ստացել թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներում:

Փոխադարձ ողջոյնից յետոյ Ժորտանիան ասում է զօր. Ուօկկերին.

«Մենք վաղուց է սպասում էինք ձեզ անհամբերութեամբ»:

«Զօր. Ուօկկեր.— Առաջին հարցը, որ ես պիտի շօշափեմ, կամաւորական բանակի յարձակումն է: Ցիշում էք, որ անցեալ ամսի վերջին եւ այս ամսուան սկզբին ես խօսում էի ձեզ անգլիական հրամանատարութեան 23 յունուար